

Սա ալ զխտելու արժանի է որ թէ երկրորդ եւ թէ երրորդ ձեւին զործածութիւնը, որչափ որ ցայս վայր մեզն ծանօթ է, Արեւելեց հանգանակին կամ Ասորիքի կը վերաբերի, որն որ Ապողինարեան աղանդոյն եւ երկուց անձանց մտորութեան հայրենիքն եղաւ: Ինչպէս Ալիփիան նոյնպէս Աւագը հոն կը վերաբերէր: Ասորուց եկեղեցին՝ որոնց քով երկրորդ ձեւը կամ մեր հանգանակը՝ 6րդ դարուն սկիզբը զսանք, նոյն եկեղեցական նահանգին մասը կը կազմէր: Վերջապէս՝ արդէն խորհրդածեցինք որ Հայք ալ, շատ հաւանականաբար, սա ձեւը նոյն Ասորիներէն առին:

Մեր Պատարագամատուցին մէջ, մեր հանգանակին՝ նշովքէն ետքն անմիջապէս կը յաջորդէ կարճ փառաբանութիւն մը, որն որ ոչ միայն նորերէն, հապա նաեւ հիներէն՝ սրբոյն Պրիզորի Լուսաւորչի կրնծայուի. վասն զի թէ տապաքութեանց եւ թէ զրչագրաց մէջ կը տեսնուի սա վերնագիրը՝ «Պրիզորի Լուսաւորչին», «Նոյնին կրնծայէ սոյն փառաբանութիւնը նաեւ՝ Աերսէս Լամբրոնացի հանգանակի մեկնութեանը մէջ: Իսկ Աերսիսի Հինողի ստէպ յիշուած թղթոյն մէջ, 7րդ դարէն, կայ փառաբանութիւնը, բայց վերնագիրը չկայ:

Իմաստին նկատմամբ՝ սարակոյս չի կրնար ըլլալ որ ասիկայ Ս. Պրիզորի վարդապետութիւնն է, այս ինքն անոր սորվեցուցածին համեմատ է: Բայց թէ ինքն (conceptis verbis) սա եւ այսչափ բառերով ասանկ փառատրութիւն՝ մը Հայոց եկեղեցոյն մէջ թողուցած ըլլայ, սոյն վերնագիրը կարող չէ ապացուցանել:

Զէ թէ մինակ սա վերնագիրն այսչափ հին չէ, ինչպէս բռնիք եւ 7րդ դարուն մէջ դեռ չկայ, հապա սա փառաբանութիւնն իսկ սերաիւ կապուած է սոյն հանգանակին հետ, այս ինքն Արրորդութեան միասնականութիւնը խանգարողները նշովքէն ետքը՝ ուղղափառք իրենք զիրենք անոնցմէ զատելով՝ իրենց յորդոր կու տան ուղիղ դաւանութիւնը պահելու («նորապապէս, իսկմէք», եւ այլն): Աստի ինչպէս սա հանգանակը, նոյնպէս անոր յաւելուածն ոչ Ս. Պրիզորի եւ ոչ անոր նախնի յաջորդացը կը վերաբերի եւ ոչ ալ կրնայ վերաբերիլ. ասիկայ 5րդ դարուն վերջը կամ 6րդ ին սկիզբը, ինչպէս վերը խօսեցանք, մարդեղութեան վրայօք Հայաստանի մէջ յուզուած վէճերուն առթիւ սա հանգանակը զործածութեան առնուած աստե՛ն, սոյն փառաբանութիւնն ալ նոյնին յարեցաւ:

Բայց ինչ էր անոր նշանակութիւնը կամ նպատակը: Ահատարականաց յատուկ էր ըսել որ, եթէ Վրիխատոս իբրեւ մարդ գարս ւնն չըլլայ ան ատեն Արրորդութեան մէջ օտարոտի բան մտած կը ըլլայ. ասոր հակառակ ուղղափառք կը ցուցնէին որ Ահատարական մտորութեամբ Արրորդութեան մէջ շորտորդ ւնն մը կ'աւելնայ: Հայք 5րդ դարուն վերջերը չկրնարով 4րդ արեւելեական ժո-